ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱԳՆ-ԱԹԾՁԲ-19/12

ք. Երևան «19» դեկտեմբեր 2022 թ.

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Բ. Սահակյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա,(այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը [illegible] Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 28711918 (քսանութ միլիոն յոթ հարյուր տասնմեկ հազար ինը հարյուր տասնութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Անհաղթահարելի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրի պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **8** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի դրույթները տարածվում են կողմերի միջև 2022թ. դեկտեմբերի 7-ից ծագած հարաբերությունների վրա:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն Երևան 0010, Վ.Սարգսյան 3 ՀՎՀՀ 02527728 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 90001109733 Գլխավոր քարտուղար Բ. Սահակյան --- /ստորագրություն/ Կ.Տ	«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ Ք. Երևան, Մանուշյան 35 «ԱմերիաԲանկ» ՓԲԸ Հ/Հ 1570003268170400 ՀՎՀՀ 00030747 Տնօրեն՝ Հ. Գրիգորյան --- /ստորագրություն/ . Կ Տ

Հավելված N 1
«19» դեկտեմբեր 2022 թ. կնքված
ԱԳՆ-ԱԹԾՁԲ-19/12 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ* ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հատկացված նախատեսված չափաբաժնի համարը	գնումների ապրանքների նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79111200 2	«Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» չորրորդ գլոբալ ֆորումի շրջանակներում **Հյուրանոց** 1. Հյուրանոցային ծառայություն – 5 օր 10.12-15.12.2022թթ 2. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 3. Հյուրանոցային ծառայություն – 4 օր 11.12-15.12.2022թթ 4. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 5. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 6. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 7. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 8. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 9. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 10. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 11. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 12. Հյուրանոցային ծառայություն – 5 օր 11.12-16.12.2022թթ 13. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 14. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 15. Հյուրանոցային ծառայություն – 4 օր 10.12-14.12.2022թթ 16. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 17. Հյուրանոցային ծառայություն – 2 օր 11.12-13.12.2022թթ 18. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 19. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 20. Հյուրանոցային ծառայություն – 6 օր 08.12-14.12.2022թթ 21. Հյուրանոցային ծառայություն – 5 օր 11.12-16.12.2022թթ 22. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ 23. Հյուրանոցային ծառայություն – 4 օր 10.12-14.12.2022թթ 24. Հյուրանոցային ծառայություն – 4 օր 11.12-15.12.2022թթ 25. Հյուրանոցային ծառայություն – 5 օր 11.12-16.12.2022թթ 26. Հյուրանոցային ծառայություն – 3 օր 11.12-14.12.2022թթ **Տրանսպորտային ծառայություններ** 27.07.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 28. 08.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 29. 09.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 30. 09.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 31. 10.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 32. 10.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 33. 10.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 34. 10.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 35. 11.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 36. 11.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 37. 12.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 38. 09.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 39. 11.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 40. 11.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 41. 11.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 42. 11.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 43. 12.12.2022 Օդանավակայան-Հյուրանոց 44. 12.12.2022 Օդանավակայան-Հյուրանոց 45. 12.12.2022 Օդանավակայան-Հյուրանոց 46. 12.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 47. 12.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 48. 12.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 49. 12.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 50. 11.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 51. 11.12.2022թ Օդանավակայան-Հյուրանոց 52.Միկրոավտոբուս նախատեսված 7 հոգու համար (VIP) 12.12.2022-	դրամ	28711918	1	ք. Երևան	7-17.12 2022թ

54.Վարորդի ծառայություն 12.12.2022թ.15.12.2022թ
55. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
56. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
57. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
58. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
59. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
60. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
61. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
62. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
63. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
64. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
65. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
66. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
67. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
68. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
69. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
70. 14.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
71. 15.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
72. 15.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
73. 15.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
74. 15.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
75. 16.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
76. 16.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
77. 16.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
78. 17.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան
79. 17.12.2022թ Հյուրանոց-Օդանավակայան

Ավիատոմսեր

80. "Ավիատոմս Աթենք-Երևան-Վիեննա-Մյունխեն-Սան Դիեգո"
81. "Ավիատոմս Ադիս Աբեբա-Դուբայ-Երևան-Դուբայ-Ադիս Աբեբա"
82. "Ավիատոմս Լոնդոն-Վիեննա-Երևան-Վիեննա-Լոնդոն"
83. Ավիատոմս Փարիզ-Երևան-Փարիզ
84. "Ավիատոմս Փարիզ-Երևան-Փարիզ"
85. "Ավիատոմս Դելի-ուբայ-Երևան-Դուբայ-Դելի"
86. "Ավիատոմս Նյու Յորք-Վարշավա-Երևան-Դուբայ"
87. "Ավիատոմս Բոստոն-Դոհա-Երևան-Դոհա-Բոստոն"
88. "Ավիատոմս Սան Խոսե-Ֆրանկֆուրտ-Երևան-Ֆրանկֆուրտ-Բուենոս Այրես"
89. "Ավիատոմս Ամստերդամ-Ֆրանկֆուրտ-Երևան-Վարշավա-Լյուբլյանա-Ցյուրիխ-Ամստերդամ"
90. "Ավիատոմս Ժնև-Փարիզ-Երևան-Փարիզ-Ժնև"
91. "Ավիատոմս Պրահա-Աթենք-Երևան-Աթենք-Պրահա"
92. Ավիատոմս Աթենք-Երևան-Աթենք
93. "Ավիատոմս Սանֆրանցիսկո-Դոհա-Երևան-Դոհա-Սան Ֆրանցիսկո"
94. "Ավիատոմս Վիեննա-Երևան-Լառնակա-Վիեննա"
95. "Ավիատոմս Բարսելոնա-Աթենք-Երևան-Աթենք-Բարսելոնա"
96. "Ավիատոմս Տոկիո-Դուբայ-Երևան-Դոհա-Բանգկոկ-Տոկիո"
97. "Ավիատոմս Բաղդադ-Դուբայ-Երևան-Դուբայ-Բաղդադ"
98. "Ավիատոմս Տորոնտո-Ֆրանկֆուրտ-Երևան-Վարշավա-Տորոնտո"
99. "Ավիատոմս Նյու Յորք-Փարիզ-Երևան-Փարիզ-Նյու Յորք"
100 "Ավիատոմս Դուբայ-Երևան-Դուբայ"
101."Ավիատոմս Նյու Յորք-Փարիզ-Երևան-Փարիզ-Նյու Յորք"
102. "Ավիատոմս Աթենք-Բրյուսել-Երևան-Աթենք"
103. "Ավիատոմս Մոնրեալ-Բրյուսել-Երևան-Վիեննա-Մոնրեալ"
104. "Ավիատոմս Պերթ-Դուբայ-Երևան-Դուբայ-Պերթ"
105. "Ավիատոմս Ժնև-Ֆրանֆուրտ-Երևան-Ֆրանկուրտ-Ժնև"
106. Ավիատոմս վերադարձից տուգանք Մկրտչյան Մանեի համար՝ Դելի-Դոհա-Երևան-Դոհա-Դելի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Երևան 0010, Վ.Սարգսյան 3
ՀՎՀՀ 02527728
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 90001109733
Գլխավոր քարտուղար
Բ. Սահակյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ
Ք. Երևան, Մանուշյան 35
«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003268170400
ՀՎՀՀ 00030747
Տնօրեն՝
Հ. Գրիգորյան

/ստորագրություն/

Հավելված N 2
«19» դեկտեմբեր 2022 թ. կնքված
ԱԳՆ-ԱԹԾՁԲ-19/12 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գումարը ներկայացված է՝ աճողական կարգով ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄՇ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79111200/2	Ներկայացուցչական ծախսեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	28711918	28711918

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Երևան 0010, Վ.Սարգսյան 3
ՀՎՀՀ 02527728
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018414
Գլխավոր քարտուղար
90001109733

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ
Ք. Երևան, Մանուշյան 35
«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003268170400
ՀՎՀՀ 00030747
Տնօրեն՝
Հ. Գրիգորյան

/ստորագրություն/
. Կ Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն